

**2. ՄՐԱՎՎԱՅՐԵՐ.** Տեղագրութիւն Վասպուրականի  
—Վանայ նահանգի գլխաւոր եկեղեցեաց, վանօրէից եւ  
ուսումնարանաց. աշխատասիրեց Գէռզագ Շէրենց  
թթիվլիս 1902 գ. 40 կ.

Պ. Եկեղեցի աշխատութիւնը կարդալով՝ մարդ կարծում  
է թէ միջնադարեան մի որևէ հար ձեռագրի լիշտականի  
քառական է կարգում. վանք և գիւղ, աւերակ ու կոտորած, բնու-  
թիւն և կեանք նկարագրուած խառն բարբառով՝ մի բոպէ  
կարծել են տալս ընթերցողին թէ փոշիների միջից հանած  
հին մազաղաթի ղեղնած ու ցեցակեր, աղաւաղուած էջերի  
վրա են զրուած դրանք, իսկ զրուն է «անարժան տրուար»  
«մեղաւոր ծառար» և այլ տիտղոսներ գործածող մի աքեղար.

Սակայն դառն իրականութիւնն է, որ անհաւատալի է  
թւում մեր դարում ապրող մարդու համար. այն, ինչ որ տե-  
ղի ունեցաւ իննանական թուականներին Տաճկահալաստանում,  
գերազանցեց զանազան «արուպների», «մեղաւորների» ձեռա-  
զրերի լիշտակարաններում արձանագրած ողբերգութիւննե-  
րին. «Սրբավագլերի» հեղինակն արդ սարսափների միջո-  
ցին զտնուելով գործողութեանց կենդրոնում՝ հարկաւ չէ  
կարող սառնասիրտ կերպով նույրուել միմիակն տեղագրու-  
թեան, ամեն մի նկարագրուած սրբավալը երկու պատկեր ու-  
նի՝ մէկը մինչեւ 1896 թ. և միան արդ թուից լետորէ Նըր հե-  
ղինակը սալիպուած է շարունակ հողակապ չէնքի նկարագրու-  
թեանն անմիջապէս կցել և նրա աւերուիլը՝ հարկաւ անպիսի  
զգացմանց պէտք է հնթակալ լինի, որոնք կաշկանդում են  
դրչի սահունութիւնը...

«Սրբավագլերը» մի անսխատեմ աշխատութիւն է.  
զիտական ոչ մի արժէք չի կարող ունենալ, որովհետև նկա-  
րագրուած պատմական վանքերն ու եկեղեցիները ոչ թուա-  
կան ունին, ոչ արձանագրութիւն, ոչ մեծութեան չափ ունին  
և ոչ մասեր. ոչ աշխարհագրական որոշ դիրք և ոչ պատմա-  
կան անցեալ Հեղինակն ընթերցողին մխիթարելու համար  
ասում է. «Ես տեղագրել էի ոչ միայն արդ սրբաւեղեաց տե-  
ղագրութիւնն, այլ և իւրաքանչիւր վանքի գոլութեան—հիմ-  
նարկութեանց թուականները իրանց լիշտակագրելովն, ար-  
ձանագրութիւններով, բայց աւաղ, վերջի տխուր անցքերն  
ինչպէս ջարդ ու փշուր արին մեր բնավալրի ամեն ինչ, նոյն-

պէս և իմ արդ թղթի կտորները—սեազրութիւնն—կուլ գնացին վերահաս հրձիգութեանց և ինձանում մնացին լոկ լիշութիւններ և տպաւորութիւնքու...»

Հերովիշեալ ձեռվ նկարազրուած են 76 վանք ու եկեղեցի. այդ նկարազրութիւնների մեծամասնութեան վերջաբանն է. «...բայց արդ բոլորը մի քանի օրում ոչնչացաւ 96-ի անցքերին». կամ ավանքը 1896-ի կոտորածի օրերում թէն շատ կեանք փրկեց, բայց շատերին էլ զերեզման դարձաւ. Այդ տխուր և արիւնոտ ժամանակից զրեթէ մինչ ցներկալս թէ վանք և թէ նրա շրջակալքի հարաբնակ լալոնի գիւղերը ամալցել են իրանց բնիկներից և փոխարինել են նոցա տեղ լեռնալին քրդերը»:

Սրտամորմոք և տարազրուած հեղինակը բացադանչում է մաղաղաթալին ոճով. «Նկալ են երկինք ու երկիր. Աստուած, հրեշտակ և համալն մարդիկ որ՝ արդ սրբավայրերը հաղար ու բիւր մարդոց, լինէին դոքա հալ, թուրք, քուրդ, ասորի, Երոպացի, հանապազօրեալ մշտառատ հայ ու ջուր սերով ու կարազովն մէկ տեղանխտարաբար տուելու հիւրասիւրել էին օրերով ու շաբաթներով. Խոկ ալժմ, նոյնպէս վկալ են՝ որ շատերն ալդ սրբավայրերից զրկուած ու կողովատուած ամեն կալք ու կեանքից և շատերն խորտակուած իրանց հաստատահմն շէնքերից աւերակաց կարգն են դասուել...»:

Գիրքը, ինչպէս ասացինք արդէն, թէն դիտական արժէք չի կարող ունենալ սական արժէ կարդալ՝ իբրև մի պարզ և անպաճուծ պատկեր այն դառն. ու ողբերգական իրականութեան մի մասի, որով շրջապատուած են ալսօր մեր արիւնակիցները....»

Գիրքը բաղկացած է 161 էջից և լի է անթիւ տալազրական սխալներով.

3. ՀՄՄԱԵՌԻՀԵԼ ՔԱԶ. ՆԱԶԱՐԵԱՆՑ. Ոտանաւորներ. (Երեխանների համար) 15 պատկերով. Մոսկովա 1903

գ. 50 կոպ.

Մեր նորազովն գրականութեան ամենաանհրաժեշտ մասերից մէկը, մա՞ն կական գրականութիւնը, շատ ողորմնիվ դրութեան մէջ է գտնուում թէ ըստ ծառալի և թէ